



ՀԱՄԱՏՈՒՄ ԵՄ՝  
Շրջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիոյան  
«18» 06 2024թ

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ**

**ԲՓ № 083 - 24**

Նախաձեռնող՝

«Ն.Ա.Պրոդակշն» ՍՊԸ  
ք. Երևան, Կենտրոն, Բայրոնի փ./1/12/Ցբն/

Գործունեությունը՝

Սևան համայնքի Ծովագյուղ բնակավայրի 1/26  
հասցեում նախատեսվող հանգստի գոտու կառուցում  
Գեղարքունիքի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 083 - 24  
«18» հունիսի 2024թ.

Ծովագյուղ բնակավայրի 1/26 հասցեում նախատեսվող հանգստի գոտու  
կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Նախաձեռնող՝ «Ն.Ա. Պրոդակշն» ՍՊԸ  
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
նախնական գնահատման հայտ  
Տեղադրման վայրը՝ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք,  
Ծովագյուղ բնակավայր

**Ներածական մաս.** Գործունեության նպատակն է Ծովագյուղ բնակավայրում իրականացնել նոր հանգստի գոտու կառուցում, որի նպատակով նախատեսվում են նաև ինժեներաերկրաբանական ուսումնասիրություններ:

Հողամասի նպատակային նշանակությունը՝ հատուկ պահպանվող տարածքների, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հանգստի համար նախատեսված, գրանցված իրավունքի տեսակը՝ Հողամասի կառուցապատման իրավունք:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի՝ 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի, դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

**Նկարագրական մաս.** Գործունեության տարածքը գտնվում է Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Ծովագյուղ բնակավայրի 1/26 հասցեում: Հողամասն ազատ է կառուցապատումից, ինչպես նաև ծառաթփային բուսականությունից, որոնք կարող են խոչընդոտել ուսումնասիրության և կառուցապատման աշխատանքների իրականացմանը: Հողամասն ամբողջությամբ գտնվում է 1905 մետր բացարձակ նիշից բարձր ընկած հատվածում: Այն պարզ ռեկտանգուլ է, թեքությունը՝ հյուսիսից դեպի հարավ, գտնվում է Սևան ազգային պարկի ոչ ավիամերձ տարածքում, հեռավորությունը Սևանա լճից կազմում է մոտ 14 մ: Հողամասի հարակից տարածքներում բացակայում են շենք-շինությունները: Տարածքի մուտքը ապահովվում է գոյություն ունեցող գրունտային ճանապարհով՝ Մ-14 միջպետական ավտոճանապարհից:

Կառուցապատվող հողամասում բուսահողի հզորությունը կազմում է 0.2-0.3 մ, ամբողջ հողամասում բուսահողի ծավալը գնահատվել է մոտ 500 մ<sup>3</sup>:



Համաձայն հայտում ներկայացված տեղեկատվության՝ Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակներ և բուսատեսակներ գործունեության ենթակա տարածքում չեն հայտնաբերվել: Նախատեսվող գործունեության տարածքը չի առնչվում բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների հետ:

Ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունների իրականացման նպատակն է, համաձայն Հայաստանի Հանրապետության նորմատիվա-տեխնիկական փաստաթղթերի, Գեոարքունիքի մարզի Սևան համայնքի Ծովագյուղ բնակավայրի 1/26 հասցեի տարածքի նախագծային փաստաթղթերի մշակումը, երկրաբանական տվյալների հավաքագրումը և համապատասխան հաշվետվության կազմումը: Այդ աշխատանքների ընթացքում իրականացվելու են՝

- ինժեներաերկրաբանական հետազոտություններ,
- տեղանքի ուսումնասիրություն՝ վտանգավոր երկրաբանական երևույթները և պրոցեսները բացահայտելու նպատակով /տղանք, քարաթափում, ճահճացում և այլ/,
- հորատանցքերով աշխատանքներ՝ գրունտերի շերտերն ու նրանց հզորությունները, ինչպես նաև ստորգետնյա ջրերի առկայությունը որոշելու նպատակով:

УГБ-50М հաստոցով մեխանիկական չոր եղանակով փորվելու է 2 հորատանցք՝ յուրաքանչյուրը 8 գծ/մ խորությամբ: Հորատանցքերի հիման վրա կազմվելու է երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքներ, ինչպես նաև օգտագործվելու են ֆոնդային տվյալները:

Սույն նախագծով նախատեսվում է կառուցել հանգստի գոտի, որը ներառում է իր մեջ 3 քրթեջտնակ, ռեստորան, սպասարկման և օժանդակ շինություններ, լողավազան և 2 մաքրման կայան: Հանգստի գոտին նախատեսված է առավելագույնը 30 մարդու համար: Գլխավոր մուտքը նախատեսվում է տարածքի հարավ-արևմտյան մասից՝ 2 սպասարկման շինությունների միջով: Շինությունները մեկ հարկանի են, հարթ տանիքով, պարզ, առավելագույն բարձրությունը՝ 6.2 մ: Մուտքը կահավորված է թեքահարթակներով՝ բնակչության սակավաշարժ խմբերի համար:

Հողամասի հյուսիս-արևմտյան մասում՝ 1906,75 նիշի վրա, նախատեսվում է տեղադրել 3 հատ տարբեր տիպի քրթեջտնակներ՝ արտադրված «NOEX HOME» ընկերության կողմից, յուրաքանչյուրը՝ 70 քմ, 115 քմ և 51 քմ մակերեսով, հեռավորությունը Սևանա լճից՝ մոտ 14 մ:

Հողատարածքի 1906,5 նիշի վրա նախատեսված է նաև սրճարան՝ 250.5 քմ մակերեսով: Տնակները հավաքվելու են տեղում՝ պատրաստի բերված մասերից:

Հողամասի հարավային հատվածում՝ 1905,6 նիշի վրա, տեղադրվելու է ռեստորան և վարչական շենք, որոնք նույնպես արտադրված է «NOEX HOME» ընկերության կողմից, երկթեք տանիքով, տեռասով, ընդհանուր մակերեսը կազմում է 308.5 մ<sup>2</sup>, հեռավորությունը Սևանա լճից՝ մոտ 14 մ:

Ռեստորանին կից՝ 1905,6 նիշի վրա, նախատեսված է բացօթյա լողավազան՝ 270 քմ մակերեսով, իր հարթակով (տերասային տախտակ ДПК), բաղկացած 3 մասից՝

- մեծերի համար նախատեսված է 1,75 մ խորությամբ,
- փոքրերի համար նախատեսված է 0,6 մ խորությամբ,
- հիդրո՝ 1 մ խորությամբ:

Հողամասի արտաքին հարավային անկյունում տեղադրվելու են 2 հատ «ЮБАС 30» ЛОГО տեսակի մաքրման կայան՝ կենցաղային ջրերի և լողավազանի համար, որոնք Սևանա լճից գտնվում են 20 մ հեռավորության վրա:



Տարածքի ջրցանի, շինտեխնիկայի դողերի լվացման, բանվորական և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար, ջրամատակարարումը կիրականացվի պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռնով:

Հանգստի գոտու շինությունների համար նախատեսված է ջեռուցման և հովացման համակարգ: Ընդհանուր մեխանիկական արտածման-ներածման օդափոխությունը նախատեսված է ռեստորանի սրահում, խոհանոցային մասում, սպասարկման և օժանդակ սենքերում և այլն: Նախատեսված են էլեկտրական օդատաքացուցիչներ: Քոթեջների և ընդհանուր օգտագործման տարածքների սանհանգույցներում տեղադրվելու են օդամուղներ:

Հանգստի գոտու էլեկտրամատակարարումն իրականացվելու է՝ համաձայն «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանների և գործող պայմանագրի:

Տեխնիկա-տնտեսական ցուցանիշներն են՝

- հողամասի ընդհանուր մակերեսը՝ 4700 քմ,
- կառուցապատման մակերեսը՝ 1367 քմ,
- կանաչապատման մակերեսը՝ 2867 քմ,
- անջրանցիկ մակերես՝ 466 քմ:

Նախատեսվող գործունեության ընթացքում կիրականացվեն հողային աշխատանքներ, որից հանույթը կկազմի 970 մ<sup>3</sup>, իսկ հետլիցքը՝ 170 մ<sup>3</sup>: Ավելացած մնացորդային հողային զանգվածը կօգտագործվի տարածքի հարթեցման և բարեկարգման համար:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել: Կանաչապատումն իրականացվելու է տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականությամբ: Նախատեսվում է կազմակերպված ոռոգման ցանց, որն իրականացվելու է ցնցուղային եղանակով:

Գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված կլինեն փորման, բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի կիրառման հետ, փոշու արտանետումների և շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ՝ դիզելային վառելիքի արտանետումների հետ:

Մթնոլորտային արտանետումները կանխելու կամ նվազեցնելու նպատակով նախատեսվում է՝ կառուցապատման ենթակա տարածքի ցանկապատում, շինությունների ծածկում՝ համապատասխան բարձրության թաղանթով, շինարարական աշխատանքների ընթացքում ջրցանի իրականացում, շինարարական տեխնիկայի վիճակի պարբերաբար ստուգում և կարգավորման իրականացում, շինարարական նյութերի տեղափոխում փակ ծածկով մեքենաներով, շինտեխնիկայի անվադողերի լվացում շինհրապարակից դուրս գալուց առաջ, սորուն նյութերի պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կկանխարգելի փոշու տարածումը:

Գործունեության իրականացման շինարարության փուլում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելելու, ինչպես նաև Սևանա լիճ վտանգավոր նյութերի արտահոսքը կանխելու նպատակով, նախատեսվում է բացառել Սևանա լիճ արտահոսքերը: Փոշենստեցման համար ջրցանը կատարվելու է ըստ անհրաժեշտության՝ հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր, անձրևաջրերը և



անիվների լվացման հոսքաջրերն ուղղորդվելու են պարզարան, որտեղ տեղի է ունենալու մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ առաջացած փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադր: Շինհրապարակում բացառվելու է տրանսպորտային միջոցների և սարքավորումների լվացումը, շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարվելու է համայնքում գործող մասնագիտացված կետերում: Շինարարության համար բետոնախառնուրդ չի նախատեսվում:

Հողային ռեսուրսների պահպանության համար շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա: Հողի բերրի շերտը պահպանելու նպատակով նախատեսվում է առաջնորդվել Կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 8-ի թիվ 1396-Ն որոշմամբ հաստատված Հողի բերրի շերտի օգտագործման կարգով և 02.11.2017թ.-ի թիվ 1404 որոշմամբ, մասնավորապես նախատեսված են հետևյալ միջոցառումները.

- հողի բերրի շերտի հանում և պահպանում ծածկված վիճակում՝ բացառելով շինարարական աշխատանքների հետևանքով դրա աղտոտումը,
- ողողումը և հողմատարումը կանխելու համար՝ լայնակույտերի մակերևույթի ու թեքությունների ամրացում՝ խոտացանքով կամ այլ եղանակներով:

Շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար նախատեսված հատվածներում, կիրականացվի ավազի կամ մանրախճի տեղադրում՝ մեքենաներից և սարքավորումներից վառելիքի և/կամ քայուղերի արտահոսքի դեպքում փոխված ավազի կամ մանրախճի տեղափոխում համապատասխան աղբավայր և դրա փոխարինումը նորով: Նախատեսվող աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր, տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինադրից:

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակների (հրդեհի առաջացում, հեղուկ նյութերի արտահոսք, շահագործվող տեխնիկայի հետ վթարներ և այլն) բացառման և ռիսկերի նվազեցման համար նախատեսվում են մի շարք միջոցառումներ, որոնք տրված են հայտի համապատասխան բաժիններում:

Նախատեսվել են աղմուկի մակարդակի նվազեցման միջոցառումներ, որոնք են՝ աղմուկ առաջացնող աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին, շինարարական աշխատանքների և տրանսպորտի տեղաշարժի կազմակերպում ցերեկային ժամերին, շինարարական աշխատանքներում աղմուկի առաջացման ժամանակակից ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների կիրառում, ինչպես նաև դրանց շահագործումը տեխնիկական նորմալ վիճակում, տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչների պարբերաբար ստուգում և կարգավորում, բոլոր մեքենաների ապահովում համապատասխան խլացուցիչներով:

Հանգստի գոտու կառուցապատման շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- մթնոլորտային արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,



- փոշենստեցման նպատակով տարածքի ջրցանում՝ տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրական 2 անգամ,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
- կենսաբազմազանության մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է մասնահանել ամբողջ շինարարության ընթացքում 1050 հազ. ՀՀ դրամ:

**Պատճառաբանական մաս.** նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, օրենսդրությամբ սահմանված կարգով, Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Ծովագյուղ բնակավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, Գեղարքունիքի մարզպետարանից, Գիտությունների ազգային ակադեմիայից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողություններն ու առաջարկությունները հաշվի են առնվել հայտի լրամշակումներում:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

### Փորձաքննական պահանջներ

1. Սևանա լճի և «Սևան» ազգային պարկի վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու և կանխարգելելու նպատակով, գործունեությունն իրականացնելիս, անհրաժեշտ է առաջնորդվել՝ «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» և «Սևանա լճի մասին» օրենքներով, ՀՀ կառավարության 2002 թվականի մայիսի 30-ի «Սևան» ազգային պարկ» պետական հիմնարկը վերակազմակերպելու, «Սևան» ազգային պարկի կանոնադրությունը հաստատելու մասին» N 927-Ն որոշմամբ, ՀՀ Ջրային օրենսգրքով և ջրային ոլորտին առնչվող իրավական ակտերի պահանջներով:
2. Կառուցապատման աշխատանքներ իրականացնելիս բացառել հիմնական շինությունների և բետոնային հիմքով այլ ենթակառուցվածքների տեղակայումը ծովի մակարդակից 1905 մետր բացարձակ նիշից ցածր ընկած տարածքներում:
3. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝



- աշխատանքների կատարման ժամանակ պատմական, «գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմինին:
4. Շինարարության ընթացքում ապահովել հայտի բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և դրանց համար սահմանված ժամանակացույցերը:
  5. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող շինադրի և տարբեր տեսակի թափոնների հեռացումն ու տեղափոխումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայրեր:
  6. Կանաչապատումն անհրաժեշտ է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականությամբ՝ համաձայնեցված «Սևան Ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հետ:
  7. Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11 հոդվածով սահմանված պահանջները:

### ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«Ն.Ա. Պրոդակշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Ծովագյուղ բնակավայրի 1/26 հասցեում նախատեսվող հանգստի գոտու կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝



Սվետլանա Կիզիրյան